Ներկայացվել է
«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի 2021 թվականի
հունիսի 23-ի նիստին (16-րդ նիստ)

«ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջան 01.01.2020-31.05.2021թթ.

Բովանդակություն

Տնօրենի ուղերձ 2
Մաս 1. Հիմնական ֆինանսական ցուցանիշներ 3
Մաս 2. Կատարված հատուցումներ 4
Մաս 3. Հատուցումների գծով հիմնադրամի ստանձնած պարտավորություններ 7
Մաս 4. Նվիրաբերություններ 8
Մաս 5. Հիմնական ֆինանսական ցուցանիշների հարաբերակցություն 12
Մաս 6. Դրամահայթայթմանն ուղղված միջոցառումներ 13
Մաս 7. Աշխատանք մեդիայի հետ 15
Մաս 8. Զարգացման և անկախացման փուլ 17
Մաս 9. Օրենսդրական փոփոխություններ 21

Տնօրենի ուղերձ

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) իր ստեղծման օրվանից անխոնջ իրականացրել է իր առաքելությունը՝ կայուն և հավասար հատուցումներ կատարելով մարտական գործողությունների արդյունքում զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամության 1-ին կամ 2-րդ կարգ ստացած զինծառայողներին ու նրանց ընտանիքներին:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին թշնամու կողմից սանձազերծված պատերազմից հետո հատկապես կարևորվեց Հիմնադրամի գործունեության անհրաժեշտությունը, քանզի պատերազմը ցավալիորեն հանգեցրեց աննախադեպ կորուստների:

2020 թվականի պատերազմի առաջին իսկ օրվանից մենք լծվեցինք համազգային դրամահավաք կազմակերպելու գործին, քանի որ ենթադրում էինք, որ լրացուցիչ գումարների կարիք է լինելու: Ի վերջո պատերազմ էր… և ցավոք մեր ենթադրությունները ճիշտ էին: 2020 թվականին ստացել ենք ավելի քան 7,9 միլիարդ ՀՀ դրամ նվիրաբերություններ՝ աշխարհի շուրջ 70 երկրներից, իսկ 2021-ին՝ շուրջ 687 միլիոն ՀՀ դրամ:

Այս տողերը գրելու պահին Հիմնադրամի ընդհանուր հատուցումների թիվը՝ 3805 է, ընդ որում՝ դեպքերի 89%-ը տեղի է ունեցել այս պատերազմի արդյունքում: Հիմնադրամի «Կամուրջ» ծրագրով հատուցումներ են տրամադրվել 1464 դեպքերի մասով՝ ծանր վիրավորում ստացած կամ անհետ կորած մեր զինծառայողներին և նրանց ընտանիքներին:

Հաշվետվողականությունն ու թափանցիկությունը Հիմնադրամի ստեղծման օրից եղել են առաջնահերթ արժեքներ: Այդ իսկ պատճառով հրապարակում ենք 2020 թվականի ամբողջական հաշվետվությունը և 2021 թվականի հաշվետվությունը մինչև մայիսի 31-ը ներառյալ:

Այսօր ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել դրոշմանիշային պարտադիր վճարներ իրականացնող մեր բոլոր հայրենակիցներին, նվիրաբերություն կատարող մեր բոլոր աջակիցներին, այս ընթացքում մեզ օգնող բոլոր անհատներին ու կազմակերպություններին: Վստահ եմ՝ Հիմնադրամի գոյությունն ապացույցն է մեր ազգի միաբանության և պատասխանատվության մեծ զգացումի:

Ուզում եմ հատուկ շնորհակալությունս ուղղել ՀՀ կենտրոնական բանկի այն աշխատակիցներին, ովքեր կամավորության սկզբունքով Հիմնադրամի թիկունքին կանգնած են ստեղծման օրից, ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցներին, ՏԻՄ մարմիններին:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել Հիմնադրամի աշխատանքներն իրականացրած մեր բոլոր կամավորներին և մեր նոր ձևավորված փոքր, բայց հզոր թիմին, որը լծվել է տքնաջան աշխատանքի: Վստահեցնում եմ՝ չի լինելու դեպք, որ որևէ զինծառայող կամ զինծառայողի ընտանիք (շահառուներ) չհատուցվեն. հասնելու ենք բոլորին:

Հիմնադրամն անխափան իրականացնելու է իր առաքելությունը:

Վարուժան Ավետիքյան

Մաս 1. Հիմնական ֆինանսական ցուցանիշներ

	2020թ.	31.05.2021թ.	Ընդհամենը	Տոկոսներ
Հատուցումներ	8,029,924,954	30,445,009,176	38,474,934,130	
Հիմնական շահառուներ	*8,029,924,954*	*28,940,859,176*	*36,970,784,130*	*96 %*
Կամուրջ ծրագիր	-	*1,504,150,000*	*1,504,150,000*	*4 %*
Պարտադիր վճարներ	9,134,277,754	10,326,131,090	19,460,408,844	
Նվիրաբերություններ	7,975,856,214	687,310,904	8,663,167,118	
Բանկային փոխանցմամբ	*6,266,869,433*	*431,676,446*	*6,698,545,879*	*77 %*
Կայքի միջոցով	*1,705,753,654*	*255,634,458*	*1,961,388,112*	*23 %*
Կառավարումից ստացված եկամուտ	2,424,783,000	789,140,540	3,213,923,540	
Դրոշմանիշային վճարի վերադարձ	115,672,000	56,530,500	172,202,500	

Մաս 2. Կատարված հատուցումներ

2.1 Հիմնադրամի շահառուներ

Հիմնադրամը 2017 թվականից սկսած հատուցումներ է տրամադրել թվով 3,805 դեպքերի մասով:

3,805 դեպքերից հատուցումների մասին որոշումներ կայացվել են 2017թ. սկսած հետևյալ տոկոսային հարաբերակցությամբ.	
Հաստատված 3,805 դեպքերը ներառել են ինչպես մինչ պատերազմը, այնպես էլ դրանից հետո տեղի ունեցած դեպքերը.	

2020թ. մինչև 2021թ. մայիսի 31-ը կայացվել է որոշում հատուցումներ տրամադրել 3,417 դեպքերի մասով, որոնցից.

	Ընդամենը	Սպայական կազմ	Պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական և շարքային զինծառայողներ	Պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի կամ կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողներ	Կամավորագրված անձինք
Զոհված	**3,317**	411	1,189	1,448	269
1-ին կարգի հաշմանդամություն	**21**	5	8	7	1
2-րդ կարգի հաշմանդամություն	**79**	10	35	30	4
Ընդհանուր	**3,417**	**426**	**1,232**	**1,485**	**274**

3,417 դեպքերի մասով որոշումները կայացվել են ինչպես 2020, այնպես էլ 2021թ. ընթացքում.



2.2. Կամուրջ ծրագիր

Կամուրջ ծրագրի շրջանակներում հատուցումներ են տրամադրվում անհետ կորած զինծառայողներին կամ այն զինծառայողներին, ովքեր ծանր վիրավորում են ստացել: Կամուրջ ֆինանսավորումը տևում է 6 ամիս, որից հետո վճարումները դադարեցվում են, կամ զինծառայողը դառնում է Հիմնադրամի հիմնական շահառու:

Մեկնարկի օրվանից Կամուրջ ծրագրով տրամադրվել են հատուցումներ թվով 1,451 դեպքերի մասով.

Կամուրջ ծրագիր	**1,451**
Անհետ կորած զինծառայող	1,066
Ծանր վիրավորում ստացած զինծառայող	385

Մեկնարկի օրվանից Կամուրջ ծրագրով տրամադրվել են **1,504,150,000** ՀՀ դրամի հատուցումներ.



1451 դեպքերից 433 դեպքերով զինծառայողներ դարձել են Հիմնադրամի հիմնական շահառու, մնացյալը շարունակում են սպասարկվել կամուրջ ծրագրի շրջանակներում.



Մաս 3. Հատուցումների գծով հիմնադրամի ստանձնած պարտավորություններ

	Մնացած պարտավորություն
Պատերազմի հետևանքով	184,940,663,412
Մինչև պատերազմ	13,120,335,193
Կամուրջ	545,500,000
Ընդամենը	***198,606,498,605***



Մաս 4. Նվիրաբերություններ

Կատարված նվիրաբերությունների հարաբերակցություն ըստ քանակի և ըստ գումարի

Քանակական
2020

	Կայք	բանկ	Ընդամենը
eur	2,990	119	3,109
usd	7,002	246	7,248
руб	4,989	44	5,033
դր	9,119	17,279	26,398
	24,100	17,688	41,788

Գումարային
2020

	Կայք	Բանկ	Ընդամենը
eur	212,450,734	237,040,921	449,491,656
usd	759,287,088	1,640,077,115	2,399,364,203
руб	468,890,637	274,095,315	742,985,952
դր	265,125,196	4,118,889,208	4,384,014,404
	1,705,753,655	6,270,102,559	7,975,856,214

31.05.2021

	Կայք	Բանկ	Ընդամենը
Eur	96	16	112
Ysd	97	42	139
Руб	69	0	69
Դր	97	3884	3981
	359	3942	4301

31.05.2021

	Կայք	բանկ	Ընդամենը
eur	38,675,311	8,197,664	46,872,974
usd	139,132,704	79,700,403	218,833,106
руб	22,622,003	-	22,622,003
դր	55,204,441	343,778,380	398,982,821
	255,634,458	431,676,446	687,310,904

Տոկոսային հարաբերակցություն



Տոկոսային հարաբերակցություն







Կատարված նվիրաբերություններն ըստ ամիսների

Քանակական

2020 նվիրաբերությունների քանակ ըստ ամիսների

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	ընդամենը
100	84	98	83	83	79	3525	640	2154	15264	12659	7019	**41788**

2021 նվիրաբերությունների քանակ ըստ ամիսների

13	14	15	16	17	ընդամենը
1231	913	823	704	630	4301

Գումարային

2020 նվիրաբերությունների ծավալ արժույթով ըստ ամիսների

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	ընդամենը
եվրո	-	-	-	-	-	-	11,425	2,020	13,280	518,196	184,809	41,348	**771,077**
դոլար	470	130	3,130	140	173	123	191,136	33,003	63,711	1,560,538	1,435,789	167,341	**3,455,684**
ռուբլի	-	12,700	4,100	-	11,000	4,000	2,038,441	741,980	512,037	63,385,556	22,763,876	24,831,841	**114,305,531**
դրամ	1,247,472	829,300	544,188	639,550	613,333	1,058,024	197,442,566	66,712,967	271,742,598	1,424,401,481	1,008,901,676	27,060,746	**3,001,193,900**

2021 նվիրաբերությունների ծավալ արժույթով ըստ ամիսների

	1	2	3	4	5	ընդամենը
եվրո	23,121	21,200	13,296	9,424	7,063	74,104
դոլար	128,104	92,091	80,146	66,153	51,506	418,000
ռուբլի	1,101,280	578,632	768,680	486,673	294,368	3,229,633
դրամ	85,960,563	62,802,348	62,326,225	150,715,825	37,177,861	398,982,821


Ամսական նվիրաբերություններ ըստ տարբեր արժույթների վերածված ՀՀ դրամի
100%
90%
80%
70%
60%
50%
40%
30%
20%
10%
0%
հուն
փետ
մարտ
ապր
մայիս
հուն
հուլ
օգոս
սեպ
հոկ
նոյ
դեկ
հուն
փետ
մարտ
ապր
մայիս
եվրո
դոլար
ռուբլի
դրամ


Ամսական նվիրաբերությունների գումար
100%
90%
80%
70%
60%
50%
40%
30%
20%
10%
0%
հուն
փետ
մարտ
ապր
մայիս
հուն
հուլ
օգոս
սեպ
հոկ
նոյ
դեկ
հուն
փետ
մարտ
ապր
մայիս
ծավալ բանկով
ծավալ կայքով

Ամսական նվիրաբերությունների գումար և քանակ



Մաս 5. Հիմնական ֆինանսական ցուցանիշների հարաբերակցություն

Դրոշմանիշային վճարներ



Կատարված հատուցումներ

Կառավարումից ստացված եկամուտներ



Նվիրաբերություններ

Մաս 6. Դրամահայթայթմանն ուղղված միջոցառումներ

Նախաձեռնություններ

1 միլիոն հայ մարտահրավեր	Հիմնադրամի կարևոր նախաձեռնություններից է «Մեկ միլիոն հայ» մարտահրավերը, որի շրջանակներում փնտրում ենք մեկ միլիոն հայ ողջ աշխարհում, ովքեր 25,000 ՀՀ դրամ, 50 դոլար կամ եվրո ամսական նվիրաբերություն կկատարեն Հիմնադրամին: Թվում է, թե 1 միլիոնը մեծ թիվ է: Ոչ: Որպեսզի 1 միլիոն մարդ ամեն ամիս կանոնավոր նվիրաբերություն կատարի մեր Հայրենիքը պաշտպանած հերոսների ընտանիքների բարօրության համար, ընդամենը անհրաժեշտ է 215 մարդ, ովքեր ոչ միայն կնվիրաբերեն այդ գումարը, այլև իրենց հերթին կհամոզեն ևս 5 հոգու, որոնք իրենց հերթին կհամոզեն ևս 5 հոգու և որոնք էլ իրենց հերթին կհամոզեն ևս 5 հոգու և այդպես շարունակ: Այս թիվը հնչեցնում ենք հաշվի առնելով 70% ձախողման հավանականությունը: Այս նախաձեռնությանը միացել է ավելի քան 1,000 նվիրաբերող:
1 միլիոն դրամ մարտահրավեր	Ձգտելով հնարավորինս մեղմացնել պատերազմի աղետալի հետևանքները, ինչպես նաև գիտակցելով գործարար համայնքի դերն ու նշանակությունը երկրի տնտեսական կյանքում՝ Գրանթ Թորնթոն ընկերությունը նախաձեռնել է «Մեկ միլիոն դրամ» մարտահրավերը, որի նպատակն է աջակցություն ցուցաբերել Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին՝ տարեկան նվիրաբերելով 1,000,000 ՀՀ դրամ, ինչպես նաև խրախուսելով այլ կազմակերպություններին վարվել նույն կերպ: Այս նախաձեռնությանը միացել են 5 ընկերություններ:
«Մեկը երկու դարձնենք»	«Մեկը երկու դարձնենք» ծրագրի նպատակն է ավելացնել Հիմնադրամին կատարվող նվիրաբերությունների ծավալը, ինչպես նաև բարձրացնել Հիմնադրամի և մասնավոր ընկերությունների միջև կապը: Ծրագիրը նաև վառ օրինակ է սոցիալական պատասխանատվության, որի միջոցով ընկերությունները կարող են ցույց տալ իրենց վերաբերմունքը հասարակության և այս պարագայում նաև մեր բանակի նկատմամբ: Ծրագրի շրջանակներում ընկերությունը պարտավորվում է իր աշխատակիցների կողմից վճարվող դրոշմանիշային վճարների չափով նվիրաբերություն կատարել Հիմնադրամին: Մեկնարկի օրվանից նախաձեռնությանը միացել է ավելի քան 100 ընկերություն:

Միջոցառումներ

Երախտիքի երգեր	ԱՄՆ-ում Գոհունակության տոնի առթիվ հայ-ամերիկյան դասական երաժիշտները հայ հերոսների ընտանիքների համար միացել են մեկ նախաձեռնության շուրջ: Պողոսյան / Մանուելյան երաժիշտ ընտանիքի կողմից կազմակերպվեց Երախտիքի երգեր դասական երաժշտության վիրտուալ համերգ ի աջակցություն Հիմնադրամի: Արդյունքում հանգանակվեց 6,842 ԱՄՆ դոլար:
Բարեգործական համերգներ	Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կողմից կազմակերպվել է 4 բարեգործական համերգ, որոնց արդյունքում Հիմնադրամին նվիրաբերվել է մոտ 30 միլիոն ՀՀ դրամ:
Գինու բարեգործական ցուցահանդես-վաճառք	Ապրիլի 8-ին Կոնգրես հյուրանոցում տեղի ունեցավ «Կենաց» գինու բարեգործական ցուցահանդես-վաճառքը: Հաճելի միջավայրում գինի ձեռք բերելով հյուրերն իրենց ներդրումն ունեցան Հիմնադրամի նվիրաբերության ֆոնդում: Միջոցառումը կազմակերպվել էր հայ գինեգործական ընկերությունների առաջարկով և միջոցներով: Միջոցառումը կազմակերպիչներն անվանել էին «Կենաց», որը գրաբարի «կեանք» բառի հոլովն է՝ այս խորհրդանշական բառով ցանկանալով հարգանքի տուրք մատուցել բոլոր հերոսներին, նշելով որ պետք է ապրեցնենք, սիրենք մեր հայրենիքը՝ հանուն լուսավոր ու արի զոհված հերոսների կենաց (կյանքի) շարունակության: Հավաքագրվել է 4,033,000 ՀՀ դրամ, որից 2.6 միլիոնը՝ աճուրդից, 1,433,000 դրամը՝ գինիների վաճառքից, համտեսից և նվիրաբերություններից:
Գարնանային վազք	Գարնանային վազքի շրջանակներում 600-ից ավելի մասնակիցներ վազեցին՝ սատարելով Հիմնադրամին: Մանկական մրցավազքին մասնակցեցին նաև հիմնադրամի շահառու՝ զոհված զինծառայողների երեխաները: Միջոցառման կազմակերպչական ծախսերը հոգացել են հովանավորները: Հիմնադրամին նվիրաբերվել է ընդհանուր առմամբ 6,700,000 ՀՀ դրամ: Նշված նվիրաբերությունները ձևավորվել են վազորդների գրանցման վճարներից (3,645,450 ՀՀ դրամ), հովանավորների տրամադրած միջոցների խնայողությունից (2,249,598 ՀՀ դրամ) և հավելյալ նվիրաբերություններից (804,952 ՀՀ դրամ):

Մաս 7. Աշխատանք մեդիայի հետ

Զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանք

Հիմնադրամի մամուլի բաժինը մշտապես պատրաստել և տարածել է մամլո հաղորդագրություններ, հայտարարություններ՝ կապված հատուցումների թվերի ավելացման, կայանալիք միջոցառումների, նախաձեռնությունների մասին: Հայաստանյան բոլոր ԶԼՄ-ները պատրաստակամորեն աշխատել են Հիմնադրամի հետ, տարածելով մամլո բոլոր հաղորդագրությունները, լուսաբանելով Հիմնադրամի գործունեությունը:

- Կազմակերպվել են մամլո ասուլիսներ:

  Տեսանյութը դիտելու համար սեղմել_այստեղ:
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:

- Իրականցվել են Ֆեյսբուք սոցիալական ցանցով առցանց հանդիպումներ Հիմնադրամի տնօրենի հետ:
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:

- Հիմնադրամը պատրաստակամորեն աշխատել է ԶԼՄ-ի հետ՝ պատասխանելով ցանկացած լրատվամիջոցի և անկախ լրագրողների կողմից բարձրացված բոլոր հարցադրումներին: Տրված մի քանի տասնյակ մեկնաբանություններից պատրաստած ռեպորտաժներից տեղադրում ենք մի քանի օրինակ:

  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ;
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:

- Հիմնադրամի կողմից աշխատանք է տարվել շահառուների հետ՝ ծանոթություն շահառուի պատմությանը, այնուհետև, շահառուի համաձայնությամբ, Հիմնադրամը լրատվամիջոցներին է տրամադրել շահառուի կոնտակտը՝ հարցազրույցների, հաղորդումների մասնակցելու համար: Ստորև մի քանի տեսանյութ.

  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:

- Հիմնադրամի տնօրենը, մասնագետները մասնակցել են հեռուստաընկերությունների ամենադիտվող ժամերին հեռարձակվող հաղորդումներին, առավոտյան ծրագրերին: Ստորև մի քանի տեսանյութ.

Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:

- Հիմնադրամի կողմից իրականացվել է աշխատանք անգլիալեզու լսարանի հետ:

  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ:

- Հիմնադրամի տնօրենը Արցախում հանդիպել է շահառուների և պոտենցիալ շահառուների հետ՝ պատասխանելով բոլոր հարցերին, հանդիպումը առցանց հեռարձակել է Արցախ TV-ին:

  Դիտելու համար սեղմել այստեղ:

- Հիմնադրամի և One Armenia-ի համագործակցության ընթացքում ստեղծվել են շահառուների մասին պատմող տեսանյութեր:
  Տեսանյութը դիտելու համար սեղմել այստեղ և այստեղ:

- Հիմնադրամի և Սիվիլնեթ լրատվամիջոցի համագործակցության արդյունքում ստեղծվել է «Քո 1000+ դրամը» հաղորդաշարը:

  Հաղորդումների շարքը դիտել այստեղ:

Աշխատանքներ սոցիալական մեդիայում

	Ֆեյսբուքյան էջն ունի 15,097 հետևորդ. էջի հավանումները՝ 14,134 է: Գրառումների միջին ներգրավվածությունը՝ 7% է: Մինչև 2020թ. նոյեմբերը ֆեյսբուքյան գրառումները հազվադեպ էին, սակայն պատերազմի ավարտից հետո Հիմնադրամի աշխատանքների ծավալը քանիցս բազմապատկվեց: Հավատարիմ մնալով իր թափանցիկության կարգախոսին՝ Հիմնադրամը կանոնավոր կերպով սկսեց տեղեկացնել հանրությանը իր աշխատանքների մասին՝ կատարված հատուցումներ, շահառուների իրազեկման բարձրացում, հավաքագրված միջոցներ, միջոցառումներ, ինչպես նաև մեկնարկեց դրամահավաքի արշավ սոցիալական ցանցերում:
	Ինստագրամում Հիմնադրամի էջը բացվել է 2020թ. նոյեմբերի 15-ին, հիմնական լսարանը ԱՄՆ-ն է: Էջն ունի 1,095 հետևորդ: Գրառումների միջին ներգրավվածությունը՝ 26%:
	Լինկդինում Հիմնադրամի էջը ստեղծվել է 2020 թվականի դեկտեմբերին: 2021 թվականի մայիսի 31-ի դրությամբ ունի 261 հետևորդ: Այս հարթակում գրառումների միջին ներգրավվածությունը 5-7% է:

Առաջիկայում նախատեսվում է մուտք գործել այլ հարթակներ, այդ թվում՝ Տելեգրամ, Թվիթեր:

Մաս 8. Զարգացման և անկախացման փուլ

Իր կազմավորման ժամանակից սկսած (2017թ.) Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի պատշաճ գործունեությունն ապահովվում էր Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատակիցների կողմից՝ հասարակական հիմունքներով: Հիմնադրամը չուներ սեփական աշխատանքային թիմ, առանձնացված տարածք կամ ենթակառուցվածքներ:

Վերջին պատերազմն ակնառու դարձրեց Հիմնադրամի անկախացման անհրաժեշտությունը, որի համար շուտափույթ ձեռնարկվեցին անհրաժեշտ միջոցառումներ. ձևավորվեց նոր մասնագիտացված թիմ, անկախ և արհեստավարժ խորհուրդ, առանձնացվեց աշխատանքային նոր գրասենյակ, ստեղծվեցին կամ սկսեցին աշխատանքներ տարվել բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման համար:

Նոր թիմ

Հիմնադրամը նոր թիմ ունի, որն այս պահին բաղկացած է 15 աշխատակիցներից:
Հիմնականում պահպանվել են նախկինում գործող հաստիքները, սակայն հաշվի առնելով Հիմնադրամի զարգացման նոր ուղին և վերջին պատերազմի նետած մարտահրավերները՝ Հիմնադրամում ստեղծվել է

մարքեթինգի և ֆոնդահայթայթման ամբողջությամբ նոր ստորաբաժանում: Այս ստորաբաժանման աշխատակիցների ակտիվ աշխատանքի շնորհիվ առավել ընգծվել է հիմնադրամի գործունեության առաջնային սկզբունքը՝ հաշվետվողականությունը: Հիմնադրամն ունի նաև դրամահայթայթման նոր մասնագետ, ով իրականացնում է նվիրաբերությունների հավաքագրման և նվիրատուների հետ կապերի հաստատման և պահպանման տարրատեսակ միջոցառումներ, որոնք այսօր ավելի քան կարևոր են:

Ձևավորվել է նաև հատուցումների նոր թիմ, որի օրնիբուն աշխատանքի շնորհիվ հնարավոր դարձավ կարճ ժամանակահատվածում հատուցման մեծածավալ դեպքերի սպասարկումը:

Թիմն ամբողջական կազմով սկսել է իր աշխատանքները 2021 թվականից և բարձր ոգևորությամբ ու խիստ ծանրաբեռնվածությամբ աշխատում է Հիմնադրամի առջև դրված յուրաքանչյուր խնդիր լուծման ուղղությամբ:

Ստորև թիմի կառուցվածքը.



Նոր Հոգաբարձուների խորհուրդ

Հիմնադրամի անկախացման փուլում մեծ նշանակություն ունի նաև նոր ձևավորված Հոգաբարձուների խորհուրդը:

2020թ. դեկտեմբերին Հիմնադրամի գործունեությունը կարգավորող օրենքում կատարվեց փոփոխություն, որի համաձայն Հիմնադրամի հոգաբարձուների գործող խորհրդի մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը նշանակված անդամների լիազորությունները դադարեցվեցին և Կենտրոնական բանկը նշանակեց խոհրդի հինգ նոր անդամներ:

Նշանակված նոր անդամներն են.

- Իրինա Սեյլանյանը,
- Ադամ Կաբլանյանը,
- Ժոզեֆ Սիմոնյանը,
- Անահիտ Ադամյանը,
- Դավիթ Հակոբյանը:

Հոգաբարձուների խորհրդի նորանշանակ անդամները լավագույնն են իրենց մասնագիտական բնագավառներում, ունեն տարբեր հիմնադրամներում աշխատելու զգալի փորձ, որն էլ հատկապես գնահատվում և արժևորվում է Հիմնադրամի կողմից: Վերջիններս ոչ միայն իրականացնում են իրենց գործառույթները որպես Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմնի անդամներ (հասարակական հիմունքներով), այլ նաև իրենց արժեքավոր փորձով և գիտելիքներով կիսվում են Հիմնադրամի աշխատանքային թիմի հետ, աջակցում են Հիմնադրամի գործունեության մասին իրազեկվածության բարձրացման և ֆոնդահայթայթման գործընթացներում ամբողջ աշխարհով մեկ:

Հիմնադրամի խորհրդի անդամների ինքնակենսագրականներին ծանոթանալու համար կարող եք անցնել *հետևյալ հղումով*:

Ծառայությունների պատվիրակում

1. Մարդկային ռեսուրսների կառավարում

Հիմնադրամի նոր թիմի ձևավորման փուլում կարևոր էր մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետ ունենալը: Աշխատանքային թիմը կազմակերպեց.

- հիմնադրամի աշխատակիցների աշխատատեղերի բնութագրերի կազմումը,
- աշխատակիցների ընտրության հայտարարությունների կազմումն ու տարածումը,
- աշխատակիցների ընտրություն ու հարցազրույցներ,
- արդեն ձևավորված թիմի համար team building միջոցառում:

2. Հաշվապահական ծառայություններ

Հատուցումների քանակի կտրուկ աճի հետ մեկտեղ աճել է վճարումների կատարման պարբերականությունն ու հաշվապահական հաշվառում իրականացնելու անհրաժեշտությունը: Ներկայումս Հիմնադրամի գլխավոր հաշվապահի վերահսկողության ներքո աշխատում է նաև հաշվապահական թիմ:

Հաշվապահական թիմը կատարում է ամենօրյա աշխատանք հատուցումների տրամադրման գործում, ինչպես նաև կազմակերպում է 2020թ. ընթացքում վճարված դրոշմանիշային վճարների վերադարձի գործընթացը:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և անվտանգություն

Հիմնադրամի տեղեկատվական ենթակառուցվածքների սպասարկումը նույնպես պատվիրակվել է: SS թիմն իրականացնում է ներքին համակարգերի սպասարկում, տեղեկատվական անվտանգության խիստ վերահսկողություն:

4. Թեժ գիծ

Շահառուների աճի հետ մեկտեղ աճեց Հիմնադրամ ուղղված հարցումների քանակը. այլևս անհնար էր քաղաքացիների հարցերին պատասխանել էլեկտրոնային հաղորդագրությունների և սոցիալական ցանցերի միջոցով, այդ իսկ պատճառով ստեղծվեց հիմնադրամի թեժ գիծ՝ 012 55 10 55 հեռախոսահամարի ներքո:

Թեժ գծի օպերատորների համար կազմակերպվեցին մի շարք դասընթացներ՝ Հիմնադրամի ներքին ընթացակարգերին ծանոթանալու համար, որից հետո Հիմնադրամի աշխատակիցների հետ մեկտեղ

օպերատորները գերծանրաբեռնվածությամբ պատասխանում են քաղաքացիների հարցերին՝ 24/7 սկզբունքով:

Վիճակագրություն.

- Զանգերի քանակ՝ **11,291**
- Օպերատորների քանակ՝ **5-7**
- Զանգերի տևողության միջին ժամանակահատված՝ **00:02:21- 00:03:00 րոպե**
- Պատասխանված զանգերի արդյունավետություն՝ **90%**

Ծրագրային լուծումների ստեղծում և զարգացում

1. Հատուցումների սպասարկման ծրագիր

Հիմնադրամի աշխատակիցների արագ և պրոֆեսիոնալ աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակահատվածում ստեղծվեց հատուցումների սպասարկման ծրագրային լուծում, առանց որի անհնար կլիներ հատուցման ներկա ծավալների սպասարկումը:

Ծրագրի միջոցով իրականացվում է.

- հատուցման դեպքերի ստացում ուժային կառույցներից,
- դեպքերի մուտքագրում և հաշվառում,
- վճարման ցուցակների ստեղծում,
- փաստաթղթաշրջանառություն:

Ներկայումս տարվում են աշխատանքներ ծրագրային լուծման բարելավման և կատարելագործման համար:

2. Հիմնադրամի կայքի զարգացում

Հիմնադրամի աշխատանքների և շահառուների կտրուկ աճն առաջ քաշեց նոր պահանջներ, որի հիման վրա կայքում կատարվեցին մի շարք լրամշակումներ, մասնավորապես.

- կայքի կառավարման հարթակում ավելացվեց մեծաքանակ հատուցումները մեկ քայլով վերբեռնելու հնարավորություն (մինչ այդ յուրաքանչյուր հատուցում ձեռքով մուտքագրվում էր),
- կատարված հատուցումներ բաժնում ավելացվեց շահառուների որոնման հնարավորություն ըստ զինծառայողի անուն ազգանվան, կարգավիճակի (զոհված, 1-ին կարգի հաշմանդամ, 2-րդ կարգի հաշմանդամ), հրապարակման ամսաթվի,
- կատարված հատուցումներ դաշտում ավելացվեց բանկային հեռախոսահամարի դաշտ,
- ստեղծվեց պատմության մեջ կայքով նվիրաբերություն կատարած բոլոր նվիրատուների բազաների արտահանման հնարավորություն,
- հատուցումներ մենյուում ստեղծվեց Կամուրջ ծրագրի շահառուներ ենթամենյու,
- մշակվեց նվիրատուների էլեկտրոնային հասցեների կարգավիճակի ստուգման հարթակ,
- «Ի պատիվ» նվիրաբերության հավաստագիրը Մեծ Եղեռնին ընդառաջ փոխարինվեց թեմատիկ հավաստագրով,

- ակտիվացվեց պարտադիր դրոշմանիշային վճարների վերադարձի առցանց դիմումի ձևը,
- ստեղծվեց վիդեոդարան,
- նվիրատուների հետ կատարվող էլեկտրոնային հաղորդակցություններում նույնպես մշակումներ կատարվեցին, օրինակ՝ ավելացվեց բաժանորդագրության ապաակտիվացման ամսաթիվ:

Գրասենյակ և տեխնիկական հագեցվածություն

Որպեսզի Հիմնադրամի նոր թիմը կարողանար հնարավորինս շուտ լծվել իր գործին, սեղմ ժամկետներում կատարվեցին հետևյալ գործողությունները.

- տարածքի վարձակալություն և վերանորգման աշխատանքներ,
- տեխնիկական հագեցվածության ապահովում,
- գույքի ձեռքբերում,
- ծրագրային լուծումների մշակման աշխատանքներ,
- տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված մի շարք գործողություններ:

Մաս 9. Օրենսդրական փոփոխություններ

Հիմնադրամի նախաձեռնությամբ կատարվել են մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի փոփոխություններ, որոնք ուղղված են եղել Հիմնադրամի շահառուների ընդլայնմանը, հատուցումների ստացման գործընթացի պարզեցմանը, այդ թվում՝ պահանջվող փաստաթղթերի կրճատմանը, Հիմնադրամի և պետական մարմինների միջև համագործակցության արդյունավետության բարձրացմանը, ներառելով՝ բայց չսահմանափակվելով.

Շահառուների կազմի ընդլայնում.

- Հատուցման դեպքերի շրջանակի մեջ ներառվեցին նաև հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների դեպքերը:
- Մեկնարկեց Կամուրջ ծրագիրը, որով Հիմնադրամի և Կառավարության կողմից Հիմնադրամին փոխանցված միջոցներից 6 ամիս շարունակ ֆինանսական աջակցություն է տրամադրվում 2020 թվականի պատերազմի հետևանքով ծանր վնասվածք կամ խեղում ստացած զինծառայողներին, ինչպես նաև անհետ կորած զինծառայողների ընտանիքներին:

Շահառու դառնալու ընթացակարգերի պարզեցում.

- Ռազմական գործողություններով պայմանավորված կրճատվեցին զինծառայողին անհայտ բացակայող և մահացած ճանաչելու ժամկետները՝ սահմանելով 3 ամիս և 1 տարի՝ համապատասխանաբար նախկին 6 ամիս և 2 տարի ժամկետների փոխարեն (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի փոփոխություն):
- Ռազմական գործողություններով պայմանավորված պարզեցվեց փոխհատուցում ստանալու գործընթացը՝ հնարավորություն տալով Հիմնադրամի շահառուներին փոխհատուցման համար դիմել տարածքային առումով իրենց ավելի մոտ գտնվող մարմիններին՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:

- Կամավորագրված անձանց և նրանց ընտանիքի անդամների փոխհատուցման համար սահմանվեց կամավորագրման փաստը հիմնավորելու առավել պարզ ընթացակարգ:

Պետական կառույցների հետ աշխատանքի բարելավում.

- 2021թ. ապրիլի 1-ից Հիմնադրամում ապահովվեց համապատասխան մարմինների և հիմնադրամի միջև տեղեկատվության փոխանակումն ու զինծառայողի մասին էլեկտրոնային գործի ձևավորումն ապահովող ծրագրի ներդրումը և կիրառումը:
- Ապահովվեց բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա անձի նույնականացումը, չեղարկելով որոշակի փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտությունը, հստակեցնելով այն դեպքերը, երբ շահառուին որոշելու համար լրացուցիչ տեղեկություններ (փաստաթղթեր) չեն պահանջվում:

Մշակվեցին ներքին կանոնակարգեր.

- գնումների իրականացման կանոնակարգ,
- միջազգային ճանաչում ունեցող լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններից մեկի կողմից (փակ մրցույթով ընտրության միջոցով) Հիմնադրամի գործունեության վերստուգումն իրականացնելու մասին կանոնակարգ,
- աշխատակիցների վարքագծի և էթիկայի կանոնակարգ:

Այլ կարգավորումներ.

- Սահմանվեցին դրոշմանիշային վճարների նոր սահմանաչափեր՝ պայմանավորված 2020թ. սեպտեմբերին սկսված պատերազմի արդյունքում Հիմնադրամի շահառուների թվի կտրուկ ավելացմամբ: Բոլորի կողմից վճարվող 1,000 դրամը փոփոխվեց, սահմանվեց 1,500 – 15,000 ՀՀ դրամի սահմանաչափ՝ կախված եկամտից:
- Սահմանվեց Հիմնադրամի համար անկախ, մասնագիտացված և ապաքաղաքական Հոգաբարձուների խորհուրդ ունենալու գաղափարը, որի հիման վրա նշանակվեցին համապատասխան խորհրդի անդամներ: Փոփոխվեց նաև խորհրդի նշանակման կարգը, հետայսու նոր խորհրդի անդամներն ընտրվելու են նախորդ խորհրդի կազմի կողմից:
- 2021թ. համար սահմանվեց ֆինանսավորում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ Հիմնադրամի վարչական և գործառնական ծախսերն իրականացնելու նպատակով: